ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՂՂԱԿԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ



ՀՈՒՆՎԱՐ 2025Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5
2. ՕՈՒՆ-Ի ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 5
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՈՒՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ 10
4. ՕՈՒՆ-Ի ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ 13
5. ՕՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 14
6. ՕՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ 15
7. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԸ 19
   7.1. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ 19
   7.2. ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԸ 19
   7.3 ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԸ 20
8. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 21
   8.1. ՈԼՈՐՏՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 21
   8.2. ՍԿԶԲՆԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ) 23
9. ՄԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԻՉ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 25
   9.1. ՀՄՈՒՏ ԵՎ ԾԱԽՍԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՇԽԱՏՈՒԺ 27
   9.2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 28
   9.3. ԴԵՊԻ ՇՈՒԿԱ ՄՈՒՏՔԻ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԻՐՔԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ. 29
10. ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 31
   10.1. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ 31
   10.2. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ 31
   10.3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ 33
   10.4. ԱՇԽԱՏՈՒԺԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԻՎԸ 34
11. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄԸ 37
12. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ 39

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԵՆՊ	ԵՐԿԿՈՂՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀԸԳՀ	Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԱԵԿԱ	Արեւելյան Եվրոպա եւ Կենտրոնական Ասիա
ԵՄ	Եվրոպական միություն
ՕՈՒՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ
ԱԱՀ	Ազատ առեւտրի համաձայնագիր
ՀԿՀԿ	Հիմնական կապիտալի համախառն կուտակում
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՏՀՏ	Տեղեկատվական եւ հաղորդակցության տեխնոլոգիաներ
ՆԽԳ	Ներդրումների խթանման գործակալություն
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիա
ՄՁ	Միաձուլումներ եւ ձեռքբերումներ
ԲԿ	Բազմազգ կորպորացիա
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպություն
ՊՄԳ	Պետություն-մասնավոր գործընկերություն
ԳևՓ	Գիտահետազոտական եւ փորձարարանախագծային
ԱԲՀ	Ազգային բարեկեցության հիմնադրամ
ԳՏՃՄ	Գիտություն, տեխնոլոգիա, ճարտարագիտություն եւ մաթեմատիկա
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար

Հայաստանը գտնվում է տնտեսական զարգացման իր ուղու առանցքային կետում՝ հիմնված արտահանումների վրա կենտրոնացած, նորարարությունների վրա հիմնված տնտեսություն ստեղծելու հավակնության վրա: Առաջիկայում օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ) առանցքային դեր կխաղան կայուն աճի, տեխնոլոգիական առաջընթացի եւ համընդհանուր բարեկեցության վերաբերյալ մեր տեսլականն իրագործելու ուղղությամբ:

Մեր կառավարության 2021-2026 թվականների ծրագրով ուրվագծվում է առաջընթացի համարձակ ուղի, որի նպատակն է բարձրացնել ՕՈՒՆ-ՀՆԱ հարաբերակցությունը՝ այն հասցնելով 6 տոկոսի՝ խթանելով կայուն եւ գրավիչ ներդրումային միջավայր: Այս ծրագիրն արտացոլում է լավ կառավարման, բաց շուկաների եւ մարդկային կապիտալի զարգացման մասով մեր հանձնառությունը՝ ապահովելով, որ Հայաստանը դառնա մրցունակ եւ ներառական տնտեսություն ունեցող երկիր:

Հայաստանը եզակի հնարավորություններ է առաջարկում ներդրողներին, այդ թվում՝ հմուտ եւ ծախսարդյունավետ աշխատուժ, խոշոր շուկաները կապող ռազմավարական դիրք եւ մասնավոր հատվածի աճին աջակցող քաղաքականության շրջանակ: Այդ ուժեղ կողմերը, 2021 թվականից սկսած, արդեն իսկ նպաստել են ՕՈՒՆ-ի զգալի աճի, եւ մենք հաստատակամ ենք այդ դինամիկան զարգացնելու հարցում:

Մենք մեր ուշադրությունը կենտրոնացրել ենք բազմազգ կորպորացիաներից բարձրորակ ներդրումներ ներգրավելու վրա, որոնք Հայաստան են բերում կապիտալ, փորձառություն եւ նորարարություններ: Բարձրացնելով արդյունավետությունը, ստեղծելով բարձր վարձատրվող աշխատատեղեր եւ ընդլայնելով արտահանման հնարավորությունները՝ այդ ներդրումները կամրապնդեն Հայաստանի դիրքը համաշխարհային շուկաներում:

Էկոնոմիկայի նախարարությունը եւ «Էնթերփրայզ Արմենիա» հիմնադրամը գտնվում են այդ ջանքերի առաջնագծում՝ անխոնջ աշխատելով ներդրողների համար աջակցող միջավայր ստեղծելու եւ Հայաստանը որպես ձեռնարկությունների համար առաջնային ուղղության ներկայացնելու նպատակով: Միասին մենք ձգտում ենք ամրապնդել գործընկերությունները, բացահայտել նոր հնարավորություններ եւ խթանել երկարաժամկետ համագործակցությունը հայկական սփյուռքի եւ համաշխարհային գործարար համայնքի հետ:

Ես հպարտ եմ մեր ունեցած առաջընթացի համար եւ շարունակում են վստահ լինել կայուն, ներառական աճի հասնելու Հայաստանի ներուժի հարցում: Հրավիրում եմ Ձեզ ուսումնասիրել Հայաստանի առաջարկած հնարավորությունները եւ միանալ մեզ բարգավաճ ապագա կառուցելու գործում:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ապագա տնտեսական զարգացումը կախված է արտահանումների վրա կենտրոնացած, նորարարությունների ձգտող տնտեսություն կառուցելու եւ առաջատար բազմազգ կորպորացիաներին (ԲԿ-ներ) օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) միջոցով Հայաստանում ներդրումներ կատարելու նպատակով ներգրավելու վրա, ինչն առանցքային դեր կունենա այդ նպատակին հասնելու համար:

Հայաստանի կառավարության 2021-2026 թվականների ծրագրի[1] նպատակն է բարձրացնել ՕՈՒՆ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ այն հասցնելով 6 տոկոսի՝ բարձրորակ ներդրումների համար ստեղծելով գրավիչ եւ կայուն ներդրումային միջավայր, որը կբարձրացնի զբաղվածության մակարդակը, արտադրողականությունը եւ մրցունակությունը:

Հայաստանի աճին նպաստել են մասնավոր հատվածի ներդրումները եւ միջազգային առեւտրի հնարավորությունների ընդլայնումը, ընդ որում, տեխնոլոգիաների եւ ծառայությունների ոլորտները դարձել են զբաղվածության եւ արտարժույթի մուտքի առանցքային շարժիչ ուժերը:

Սկսած 2021 թվականից՝ ՕՈՒՆ-ը զգալիորեն աճել է, եւ Հայաստանը ներդրողներին առաջարկում է՝

- հմուտ եւ ծախսարդյունավետ աշխատուժ,
- մասնավոր հատվածի ներդրումների աջակցության համար հուսալի քաղաքական միջավայր, եւ
- դեպի շուկա մուտքի եւ ռազմավարական դիրքի ընդլայնում:

2. ՕՈՒՆ-Ի ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

2023 թվականին համաշխարհային ՕՈՒՆ-ը կազմել է 1.3 տրիլիոն դոլար՝

[1] Հայաստանի կառավարություն (2021թ.). Հղում

համաձայն Համաշխարհային ներդրումների զեկույց 2024»-ի[2]: ՕՈՒՆ-ը բարձրացնում է զբաղվածության մակարդակը, արտադրողականությունը, տեխնոլոգիաների փոխանակումը, արտահանումները եւ տեխնիկական եւ կառավարման մասով փորձառությունը: Ընդհանուր առմամբ, ՕՈՒՆ-ի հոսքերը համարժեք են հիմնական կապիտալի համաշխարհային համախառն կուտակումների շուրջ 5 տոկոսին, իսկ օտարերկրյա դուստր ձեռնարկությունների արտադրությունը նպաստում է համաշխարհային արտադրանքի ավելի քան 6 տոկոսին[3]:

ԲԿ-ների շարունակական ընդլայնմանը զուգահեռ՝ ՕՈՒՆ-ի ներհոսքերն Արեւելյան Եվրոպա եւ Կենտրոնական Ասիա (ԱԵԿԱ)[4] 2022 եւ 2023 թվականներին հասել են տարեկան ռեկորդային՝ շուրջ 40 միլիարդ դոլար ցուցանիշի, ինչպես երեւում է 1-ին գծապատկերում: Բացի այդ, 2022 եւ 2023 թվականների ընթացքում ՕՈՒՆ-ի համաշխարհային ներհոսքերում ԱԵԿԱ-ի մասնաբաժինը հասել է ռեկորդային ցուցանիշների՝ արտացոլելով ՕՈՒՆ-ի մեծ հնարավորությունները եւ տարածաշրջանի երկրների դիրքի մրցունակությունը:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1. ՕՈՒՆ-Ի ԶՈՒՏ ՆԵՐՀՈՍՔԵՐԸ ԵՎՐՈՊԱ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ (ԱԵԿԱ), 2013-2023 ԹԹ.



Աղբյուրը՝ ՄԱԿ ԱԶՀ-ից ստացված տվյալների հիման վրա:

[2] ՄԱԿ ԱԶՀ (2024թ.). Հղում
[3] ՄԱԿ ԱԶՀ (2024թ.). Հղում
[4] Քաղաքականության սույն ամփոփագրում սահմանված է որպես Ալբանիա, Հայաստան, Բելառուս, Բոսնիա եւ Հերցեգովինա, Բուլղարիա, Խորվաթիա, Էստոնիա, Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, Լատվիա, Լիտվա, Մոլդովա, Չեռնոգորիա, Հյուսիսային Մակեդոնիա, Ռումինիա, Սերբիա եւ Սլովակիա:

ՕՈՒՆ-ի համաշխարհային երեք հիմնական փոփոխություններն ստեղծում են նոր մարտահրավերներ եւ հնարավորություններ ՕՈՒՆ-ի ներգրավման առնչությամբ.

1) ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇՂԹԱՅԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԵՐԿԻՐ

Աշխարհատնտեսական առճակատումն աշխարհաքաղաքական բլոկների միջեւ հանգեցրել է ներդրումային հոսքերի նվազման. աշխարհաքաղաքական տեսանկյունից միմյանցից հեռու գտնվող երկրների[5] միջեւ ՕՈՒՆ-ի հիման վրա զրոյից ստեղծվող նախագծերի համամասնությունը 2013 թվականին համաշխարհային ՕՈՒՆ նախագծերի 23 տոկոսից նվազել է՝ հասնելով 2022 թվականին ՕՈՒՆ նախագծերի 13 տոկոսի: Դա հանգեցնում է ՕՈՒՆ հնարավորությունների ընդլայնման՝ մոտակա հարեւան երկրներ եւ դաշնակից երկրներ արտապատվիրակման համար, հատկապես՝ կարգավորման խիստ ռեժիմներ ունեցող եւ անմաքս հասանելիությամբ տարածաշրջանային բլոկներին շատ մոտ գտնվող երկրների համար:

2) ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՈՒՆ-Ի ԱՃԸ. Արտերկրում ներդրումներ կատարող ԲԿ-ների ոլորտային կազմն ավանդական արտադրականից անցում է կատարում դեպի թեթեւ ակտիվների, ծառայությունների գործունեության: 2-րդ գծապատկերում երեւում է, որ տեխնոլոգիական եւ գիտելիքահեն ծառայությունների ոլորտներն ավելացրել են իրենց մասնաբաժինը համաշխարհային ՕՈՒՆ նախագծերում՝ 2016 թվականի 36 տոկոսից հասցնելով 2023 թվականին 41 տոկոսի: Մյուս կողմից՝ ավանդական արտադրական նախագծերի մասնաբաժինը ՕՈՒՆ-ի հիման վրա զրոյից ստեղծվող համաշխարհային նախագծերում 2016 թվականի 20 տոկոսից նվազել է 2023 թվականին մինչեւ 14 տոկոս:

[5] Աշխարհաքաղաքական տեսանկյունից միմյանցից հեռու գտնվող երկրների սահմանումները տե՛ս Բեյլի, Մ. Ա., Ա. Ստրեժնեւ եւ Է. Վոետեն (2017թ.): «Միավորված ազգերի կազմակերպության կողմից իրականացվող քվեարկության տվյալների դինամիկ վիճակի նախապատվությունների նախնական գնահատում»: Հակամարտությունների կարգավորման ամսագիր 61(2). 430-456):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2. ԶՐՈՅԻՑ ՍՏԵՂԾՎՈՂ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՈՒՆ-Ի ՆԱԽԱԳԾԵՐԻ ԹՎԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ, 2016-2023 ԹԹ. (ՏՈԿՈՍ)



Աղբյուրը՝ ՕՈՒՆ շուկաները՝ «Ֆայնենշլ Թայմզ Լիմիթիդ» ընկերությունից: Հանրամատչելի աղբյուրների եւ Ներդրումների խթանման գործակալությունների (ՆԽԳ-ներ) կողմից տրամադրված տվյալների հիման վրա: Բացի այդ, տեխնոլոգիական եւ գիտելիքահեն ծառայությունները ներառում են ֆինանսական ծառայությունները, մասնագիտական ծառայությունները, ծրագրաշարի եւ ՏՏ, ինչպես նաեւ հեռահաղորդակցության ծառայությունները: Ավանդական արտադրությունը ներառում է արտադրական բոլոր նախագծերը՝ բացառությամբ նոր արդյունաբերությունների (մաքուր տեխնոլոգիաներ, կիսահաղորդիչներ եւ էլեկտրական տրանսպորտային միջոցներ):

3) ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կլիմայի փոփոխությունը եւ կառավարության աջակցությունը ներդրումների հարցում, որը կարագացնի անցումը ցածր ածխածնային տնտեսությանը, հանգեցրել է մաքուր տեխնոլոգիաների ՕՈՒՆ-ի արագ աճի, հատկապես՝ վերականգնվող էներգիայի միջոցով էլեկտրաէներգիայի արտադրության եւ արեւային ֆոտովոլտային եւ քամու ոլորտում արտադրության մատակարարման շղթաներում: Ընդհանրապես տեղեկատվական տնտեսության եւ մասնավորապես՝ արհեստական բանականության զարգացումը հանգեցնում է ՕՈՒՆ-ի մեծ գլոբալ փոփոխության կիսահաղորդիչների եւ տվյալների կենտրոնների ոլորտներում: 3-րդ գծապատկերում երեւում է, որ մաքուր տեխնոլոգիաների, տվյալների կենտրոնների եւ կիսահաղորդիչների ոլորտները դարձել ՕՈՒՆ-ի առաջատար ոլորտները, որոնք գնահատվում են ըստ նախագծերում կատարվող կապիտալ ներդրումների՝ 2022 թվականին հասնելով ամբողջ աշխարհում ՕՈՒՆ-ի կապիտալ ներդրումների 50 տոկոսից ավելիին:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 3. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՈՒՆ-Ի ԶՐՈՅԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ, 2016-2023 ԹԹ. (ՏՈԿՈՍ)



Աղբյուրը՝ ՕՈՒՆ շուկաները՝ «Ֆայնենշլ Թայմզ Լիմիթիդ» ընկերությունից: Հանրամատչելի աղբյուրների եւ Ներդրումների խթանման գործակալությունների (ՆԽԳ-ներ) կողմից տրամադրված տվյալների հիման վրա: Տվյալները ներառում են նախագծերում կապիտալ ներդրումների նախահաշիվները: Նոր արդյունաբերությունները ներառում են մաքուր տեխնոլոգիաները, կիսահաղորդիչները, տվյալների կենտրոնները եւ էլեկտրական տրանսպորտային միջոցները: Ավանդական արտադրությունը ներառում է արտադրական նախագծերը՝ բացառությամբ նոր արդյունաբերությունների:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՈՒՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումները զգալիորեն աճել են՝ 2022 եւ 2023 թվականներին հասնելով ՕՈՒՆ-ի ներհոսքերի ամենաբարձր մակարդակին, ընդ որում, վերջին երկու տարիների ընթացքում ներգրավվել է ավելի քան 1.5 միլիարդ ԱՄՆ դոլար ՕՈՒՆ, ինչպես ներկայացված է 4-րդ գծապատկերում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 4. ՀԱՅԱՍՏԱՆ ՕՈՒՆ-Ի ԶՈՒՏ ՆԵՐՀՈՍՔԵՐԸ, 2013-2023 ԹԹ. (ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ)



Աղբյուրը՝ ՄԱԿԱՋՀ-ից ստացված տվյալների հիման վրա, Հայաստանի կենտրոնական բանկ:

Դեպի Հայաստան ՕՈՒՆ-ի աճն արտացոլում է բարելավվող գործարար միջավայրը եւ հնարավորություններն ՕՈՒՆ-ի համար եւ այն, թե ինչ դիրքում է գտնվում Հայաստանը՝ ՕՈՒՆ-ի առանցքային համաշխարհային միտումներից օգուտ քաղելու համար (տե՛ս 2-րդ բաժինը): Մասնավորապես Հայաստանն օգուտ է քաղել բարձր տեխնոլոգիական ծառայությունների եւ արդյունաբերության ոլորտներում համաշխարհային ՕՈՒՆ-ի արագ աճից. սկսած 2020-2023 թվականներից՝ Հայաստանում ՕՈՒՆ-ի հիման վրա զրոյից ստեղծվող նախագծերի կեսից ավելին (52 տոկոս) ծրագրաշարերի ստեղծման եւ ՏՏ ոլորտներում էին՝ 2014-2019թթ.-ին ՕՈՒՆ

նախագծերի մեկ հինգերորդի (22 տոկոս) հետ համեմատությամբ[6]: Ծրագրաշարերի ստեղծման եւ ՏՏ ոլորտների այդ նախագծերից շատերը գիտահետազոտական եւ փորձարարանախագծային (ԳևՓ) աշխատանքների ոլորտում էին, եւ Հայաստանը նաեւ ներգրավել է մի շարք ԳևՓ նախագծեր կիսահաղորդիչների ոլորտում:

Հայաստանը ոչ միայն ավելացրել է այն ԲԿ-ների թիվը, որոնք երկրում ստեղծում են ծրագրաշարերի ստեղծման, ՏՏ եւ ԳևՓ նախագծեր, այլեւ ավելացրել է տարածաշրջանային շուկայում ՕՈՒՆ-ի մասնաբաժինը: Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում ծրագրաշարերի ստեղծման եւ ՏՏ ոլորտում ՕՈՒՆ նախագծերի շուկայում Հայաստանի մասնաբաժինն աճել է 2014-2019 թվականների 1 տոկոսից՝ 2020-2023 թվականներին հասնելով 5.4 տոկոսի այնպիսի տեխնոլոգիական կենտրոնների հետ համեմատությամբ, ինչպիսին է Լատվիան:

Տեխնոլոգիական եւ գիտելիքահեն ծառայությունների ոլորտներում ՕՈՒՆ-ը փոքր կապիտալով է, պահանջվում են օբյեկտների, մեքենաների եւ սարքավորումների համար նվազագույն կապիտալ ներդրումներ, սակայն մեծ ներդրումներ՝ աշխատուժում: Որպես այդպիսին, ՕՈՒՆ-ի այս տեսակը չի հանգեցնում ՕՈՒՆ-ի մեծ ներհոսքերի, սակայն մեծ ազդեցություն ունի տնտեսական զարգացման վրա՝ ստեղծելով աշխատատեղեր բարձր տեխնոլոգիաների ոլորտում, զարգացնելով հմտությունները եւ գիտելիքները, խթանելով կրթության ոլորտի զարգացումը եւ խթանելով արտահանումները, ինչպես նաեւ ստեղծելով դրական արդյունքներ շինարարության, մանրածախ առեւտրի, ինչպես նաեւ հյուրանոցային, ռեստորանային եւ սրճարանների/սննդի ոլորտներում:

Թեեւ ըստ այդմ ՕՈՒՆ տվյալները գնահատելիս շատ կարեւոր է հաշվի առնել դեպի Հայաստան տեխնոլոգիական եւ գիտելիքահեն ՕՈՒՆ-ի մեծ մասնաբաժինը, ՕՈՒՆ-ի ներհոսքերի վերաբերյալ տվյալները դեռեւս կարեւոր են աճող ՕՈՒՆ-ի հնարավորությունները գնահատելիս:

Ստորեւ ներկայացված 5-րդ գծապատկերում ցուցադրված է, որ 2017-2022 թվականներից սկսած՝ ՕՈՒՆ-ի զուտ ներհոսքերը դեպի Հայաստան միջինում համարժեք են եղել ՕՈՒՆ-ի 2.2 տոկոսին: Դա համեմատելի է այնպիսի երկրների հետ, ինչպիսին է Վրաստանը, որտեղ ՕՈՒՆ-ի ներհոսքերը համարժեք են եղել ՀՆԱ-ի 7.4 տոկոսին:

[6] ՕՈՒՆ շուկաներ, «Ֆայնենշլ Թայմզ Լիմիթիդ» ընկերությունից ստացված տվյալների հիման վրա: Տվյալները հիմնված են հանրամատչելի աղբյուրների վրա եւ հաշվի չեն առնում բոլոր նախագծերը:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 5. ՕՈՒՆ-Ի ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋԻՆ ԶՈՒՏ ՆԵՐՀՈՍՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԸՆՏՐՎԱԾ ԵՐԿՐՆԵՐ, 2017-2023 ԹԹ. (ՀՆԱ –Ի ՏՈԿՈՍԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ)



Աղբյուրը՝ ՄԱԿ ԱԶՀ-ից ստացված տվյալների հիման վրա:

Եթե Հայաստանը ներգրաված լիներ իր ՀՆԱ-ի համեմատությամբ նույն ծավալի ՕՈՒՆ, ինչ Վրաստանը (ՕՈՒՆ ծավալը համարժեք է ՀՆԱ-ի 7.4 տոկոսին), ապա այն, սկսած 2017-2023 թվականներից, ներգրաված կլիներ չորս անգամ ավելի ՕՈՒՆ՝ հավելյալ 5.9 միլիարդ ԱՄՆ դոլար: Դա ընդգծում է Հայաստանի՝ ավելի մեծ ներդրումներ պահանջող ոլորտներում ՕՈՒՆ-ն ավելացնելու հնարավորությունների ծավալը ՝ միեւնույն ժամանակ շարունակելով զարգացնել Հայաստանի գրանցած արդյունքները ԲԿ-ների ներգրավման գործում՝ բարձր տեխնոլոգիական եւ գիտելիքահեն ՕՈՒՆ նախագծեր ստեղծելու նպատակով:

4. ՕՈՒՆ-Ի ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՕՈՒՆ-ի դեպի Հայաստան ներհոսքի զուտ ծավալը ՀՆԱ-ի եւ տնտեսության մեջ ընդհանուր ներդրումների չափի հետ հարաբերակցությամբ (հիմնական կապիտալի համախառն կուտակումը (ՀԿՀԿ)) վերջին տասնամյակում զգալիորեն տարբեր է եղել: 2020 թվականին Քովիդ-19 համավարակի գագաթնակետին ՕՈՒՆ-ի ներհոսքերը հավասար էին ՀՆԱ-ի եւ ՀԿՀԿ-ի շատ ցածր տոկոսին: Հետեւաբար ՕՈՒՆ-ի ներհոսքերի արժեքը ՀՆԱ-ի եւ ՀԿՀԿ-ի հետ հարաբերակցությամբ 2022 թվականին հասել է ռեկորդային բարձր մակարդակի, ընդ որում, ՕՈՒՆ-ի ներհոսքերը համարժեք էին ՀԿՀԿ-ի ավելի քան 25 տոկոսին՝ ինչպես ներկայացված է 6-րդ գծապատկերում: Դա ցույց է տալիս ՕՈՒՆ-ի ներդրումների աճող կարեւորությունը Հայաստանի տնտեսության համար:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 6. ՕՈՒՆ-Ի ԶՈՒՏ ՆԵՐՀՈՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ ՀՆԱ-Ի ԵՎ ՀԿՀԿ-Ի ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՄԲ, 2013-2023 ԹԹ. (ՏՈԿՈՍ)



Աղբյուրը՝ ՄԱԿ ԱԶՀ-ից ստացված տվյալների հիման վրա: ՀՆԱ-ով գնահատվում է արտադրված բոլոր վերջնական ապրանքների եւ ծառայությունների շուկայական արժեքը: ՀԿՀԿ-ն ներառում է հողի բարելավումները, գործարանների, մեքենաների եւ սարքավորումների գնումները, ինչպես նաեւ ճանապարհների, երկաթուղիների եւ համանման շինությունների, այդ թվում՝ դպրոցների, գրասենյակների, հիվանդանոցների, մասնավոր բնակելի տների եւ առեւտրային եւ արդյունաբերական շենքերի կառուցումը:

Հայաստանի տնտեսության մեջ ԲԿ-ների եւ ՕՈՒՆ-ների աճող դերը նպաստել է երկրի տնտեսական կատարողականի բարձրացմանը: Հիմնական փաստերը ներառում են[7]՝

- 2023 թվականին Հայաստանի տնտեսությունն աշխարհում 4-րդ ամենաարագ աճող տնտեսությունն էր ՀՆԱ-ի ընդհանուր աճի (8.3 տոկոս) եւ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճի (7.5 տոկոս) տեսանկյունից,
- 2023 թվականին Հայաստանի առեւտրային եւ ավելացված արժեքով ծառայություններն ամենաարագն էին աճում՝ 12.1 տոկոս աճով,
- 2023 թվականին Հայաստանն աշխարհում ապրանքների եւ ծառայությունների 4-րդ ամենաարագ աճող արտահանումներն ուներ՝ 41.6 տոկոս աճով, ինչն ավելի բարձր էր, քան Եվրոպայի կամ Ասիայի որեւէ երկրում, եւ
- 2023 թվականին Հայաստանը տեղեկատվական եւ հաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում (ՏՀՏ) արտահանումների 6-րդ ամենաբարձր հարաբերակցությունն ուներ (արտահանումների 12.7 տոկոսը), եւ այն ավելի բարձր էր միայն Իռլանդիայում, Իսրայելում, Կիպրոսում, Հնդկաստանում եւ Ուկրաինայում:

«Էնթերփրայզ Արմենիա» հիմնադրամը[8]՝ Ներդրումների խթանման ազգային գործակալությունը (ՆԽԳ), կանխատեսում է ընթացքում գտնվող շուրջ 2.5 միլիարդ ԱՄՆ դոլար ներդրումներ եւ նաեւ աշխատում է ներկայիս 200-ից ավելի ներդրողների հետ՝ իրենց ներդրումները պահպանելու եւ ընդլայնելու հարցում աջակցելու նպատակով: Ակնկալվում է, որ Հայաստանի տնտեսության համար ԲԿ-ների եւ ՕՈՒՆ-ի կարեւորությունն առաջիկա տարիների ընթացքում կընդլայնվի: Հայաստանի էկոնոմիկայի նախարարությունը «Էնթերփրայզ Արմենիա» հիմնադրամի հետ համագործակցությամբ մեկնարկել է նաեւ «Ֆորբս»-ի «100 ամենաարժեքավոր ապրանքանիշերը» նախաձեռնությունը, որի նպատակն է դյուրացնել համագործակցությունը տեղական խոշոր ընկերությունների եւ «Ֆորբս»-ի ցուցակում ընդգրկված ապրանքանիշերի միջեւ եւ ներդրումները տնտեսության իրական հատվածում:

5. ՕՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հայաստանի կառավարության 2021-2026 թվականների ծրագիրը երկրի ազգային զարգացման համապարփակ ռազմավարությունն է: Ռազմավարությամբ

[7] Տվյալները ստացվել են «Ֆայնենշլ Թայմզ Լիմիթիդ» ընկերության «ՕՈՒՆ ուղենիշ»-ից եւ հիմնված են ՕՈՒՆ-ի առավելագույն ծավալ ունեցող 100 երկրների վրա:
[8] «Էնթերփրայզ Արմենիա» հիմնադրամ (2023 թ.). Հղում

առաջնայնացվում են լավ կառավարումը եւ օրենքի գերակայությունը, կոռուպցիայի դեմ պայքարը, խրախուսվում են բաց շուկայական մրցակցությունը, մարդկային կապիտալի զարգացումը եւ հայկական սփյուռքի հետ առավել ամուր կապերի հաստատումը՝ տնտեսական աճը խթանելու նպատակով:

Այս ծրագիրը համահունչ է Կառավարության՝ ՕՈՒՆ-ՀՆԱ զուտ հարաբերակցությունը մինչեւ 6 տոկոս ավելացնելու հավակնությունների հետ՝ ստեղծելով գրավիչ եւ կայուն ներդրումային միջավայր, նպաստելով ավելի մեծաթիվ եւ որակյալ ներդրումների ներգրավմանը, որոնք կավելացնեն աշխատատեղերի թիվը, կապիտալի կուտակումը եւ երկարաժամկետ զարգացումը: Ծրագրի՝ տնտեսության հետ կապված հիմնական նպատակները ներառում են՝

- արտահանման վրա կենտրոնացած, գիտելիքահեն եւ ներառական տնտեսության ստեղծումը՝ ՀՆԱ-ի տարեկան 7 տոկոս աճի ցուցանիշի հասնելու համար,
- գործազրկության ցուցանիշի նվազեցումը՝ այն հասցնելով 10 տոկոսի,
- մասնավոր հատվածի աշխատողների փոխհատուցման չափի ավելացումը՝ հասցնելով ՀՆԱ-ի նկատմամբ 25 տոկոսի,
- տնտեսական բարդության ցուցիչի ավելացումը՝ այն հասցնելով 0.1 տոկոսի:

6. ՕՈՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Հայաստանի նպատակն է ներգրավել ԲԿ-ներին՝ երկրում գործունեություն ծավալելու եւ կապիտալ, տեխնիկական գիտելիքներ եւ կառավարչական կարողություններ ապահովելու համար, որոնք կբարձրացնեն տնտեսության արտադրողականությունը, արտահանումները եւ ավելացված արժեքը: Հետեւաբար ուշադրության կենտրոնում է ոլորտի առաջատար ԲԿ-ներից ներդրումներ ներգրավելու հարցը, որոնք համաշխարհային կորպորացիաներ են եւ կարող են կայուն տնտեսական զարգացման ազդեցություն ապահովել:

Հայաստանի կառավարությունը հավատարիմ է ներդրումների սահմանափակումները վերացնելու, արդար հարկային համակարգ ստեղծելու եւ ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծման եւ պահպանման կայուն քաղաքականություն վարելու հարցում՝ նպատակ ունենալով բարձրացնել օտարերկրյա եւ ներքին ներդրումների որակը:



Հայաստանի կառավարության քաղաքականության հիմնական նպատակները ներառում են հետեւյալը[9].

- ավելացնել Հայաստանի ՕՈՒՆ կատարողականը՝ ներգրավելով առաջատար ԲԿ-ների՝ համաշխարհային մակարդակով կապիտալացնելով տեխնոլոգիական ներդրումների աճը եւ արտադրությունը սկզբնական երկիր վերադարձնելու եւ մոտակա հարեւան երկրներ արտապատվիրակելու հնարավորությունները,
- վերհանել, ընդգծել եւ ստեղծել Հայաստանի մրցակցային առավելությունները,
- ապահովել մրցունակ ՆԽԳ, որը համապատասխանում է միջազգային լավագույն փորձին,
- ավելի լավ կապիտալացնել ներուժը եւ հնարավորությունները, որոնք հայկական սփյուռքն առաջարկում է ՕՈՒՆ-ի համար,
- կառուցել ավելի կայուն եւ բազմազան ՕՈՒՆ պորտֆել նոր ոլորտներում եւ սկզբնական շուկաներում,
- ամրապնդել գործընկերությունն առկա ներդրողների հետ, եւ
- ավելացնել ներդրումների միջսահմանային ձեւերի բազմազանությունը:

Հայաստանի կառավարությունը վարում է բաց դռների քաղաքականություն ՕՈՒՆ-ի համար: Ներդրումային քաղաքականությունը հիմնված է ներդրումային հարաբերությունների ազատականացման, օտարերկրյա ներդրողների նկատմամբ

[9] Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն (2022 թ.). Հղում

խտրականություն չդրսևորող ազգային քաղաքականության հաստատման եւ ներդրումների պաշտպանության ապահովման վրա: Օտարերկրյա ընկերություններն ունեն իրավունք արժանանալու նույն վերաբերմունքին, ինչ ազգային ընկերությունները՝ Հայաստանի օրենսդրության համաձայն, եւ տնտեսության ոլորտների մեծամասնությունում առկա չեն էական սահմանափակումներ:

Օտարերկրյա ներդրումային նախագծերը կարգավորող իրավական դրույթները սահմանված են Քաղաքացիական օրենսգրքում (1998թ.)[10], որով սահմանվում է գույքային իրավունքների, պայմանագրերի կատարման եւ կորպորատիվ կառավարման իրավական դաշտը, եւ *«Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքում* (1994թ.)[11], որով միջազգայնորեն ճանաչված պաշտպանություն եւ երաշխիքներ են նախատեսվում օտարերկրյա ներդրողների համար: Այս միասնական ներդրումային օրենքով սահմանվում են օտարերկրյա ներդրողների առանցքային իրավունքները եւ արտոնությունները, այդ թվում՝

- անսահմանափակ մուտքը ոլորտների մեծամասնություն[12] եւ երկրում գտնվող աշխարհագրական տարածքներ,
- բնական ռեսուրսների շահագործումը կոնցեսիոն պայմանագրերով,
- գույքի նկատմամբ 100 տոկոս սեփականությունը (բացառությամբ հողի՝ ֆիզիկական անձանց դեպքում), ընդ որում, օտարերկրյա քաղաքացիները հասանելիություն ունեն երկարաժամկետ լիզինգի պայմանագրերին,
- գույքի եւ շահույթի ազատ եւ անսահմանափակ վերադարձը,
- արժույթի անսահմանափակ փոխանակումը շուկայական փոխարժեքով,
- անձնակազմի ներգրավման նկատմամբ սահմանափակումների բացակայությունը,
- պետական մարմինների կողմից իրենց պարտականությունների կատարման ընթացքում իրականացվող ապօրինի գործողությունների արդյունքում կրած կորստի փոխհատուցումը:

Քաղաքականության ավելի լայն բարելավումները ստեղծել են ամուր դաշտ՝ կանխատեսելի եւ մրցունակ գործարար միջավայր ապահովելու եւ մասնավոր

[10] Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ (ARLIS) (1998թ.). Հղում
[11] Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ (ARLIS) (1994թ.). Հղում
[12] Զանգվածային լրատվության միջոցների եւ առեւտրային ավիացիայի եւ գյուղատնտեսական հողերի ոլորտներում առկա են որոշ սահմանափակումներ օտարերկրացիների սեփականության նկատմամբ:

ներդրումները որպես տնտեսական զարգացման շարժիչ ուժ խթանելու համար, պետական մարմինների եւ քաղաքականության ուղղություններում ՕՈՒՆ-ի նկատմամբ համակարգված մոտեցման համատեքստում: Բացի այդ, Հայաստանի կառավարությունը ներկայումս լրամշակում է ՕՈՒՆ-ի մասին ազգային օրենքը՝ միջազգային ներդրողների համար երկիրն ավելի գրավիչ դարձնելու նպատակով:

Շուկայական մրցակցությունը եւ դեպի շուկա մուտքի արգելքների վերացումն ամրապնդվել է *«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով* (2020)[13]: Պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) նախագծերում ներգրավվելու հնարավորությունները սահմանվել են *«Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքով*, որն ընդունվել է 2019 թվականին եւ փոփոխվել 2021 թվականին[14]: Այս օրենքով սահմանվել է ենթակառուցվածքային նախագծերում օտարերկրյա ներդրումների շրջանակը, եւ ներդրվել են Կառավարության կողմից ՊՄԳ նախագծերի ընտրության հստակ չափանիշներ: *«Լիցենզավորման մասին» օրենքի* փոփոխություններով (2023 թ.) լիցենզավորումն ընդլայնվել է՝ ընդգրկելով ա) բժշկական արտադրատեսակների արտադրությունը եւ բ) բժշկական արտադրատեսակների սպասարկումը: Հետեւաբար ձեռնարկություններին անհրաժեշտ կլինի այսուհետ նախապես ստանալ լիցենզիա՝ այդ գործողություններն իրականացնելու համար:

ՕՈՒՆ-ի նկատմամբ բաց դռների քաղաքականության իրականացման հետեւողականությունն ապահովելու նպատակով օտարերկրյա ընկերությունները կարգավորվում են *Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով* (2016թ.)[15], որը հարկերի գործող տեսակները սահմանող եւ հարկային ռեժիմները կարգավորող հիմնական իրավական ակտն է: Կորպորատիվ եկամտահարկը ներկայումս սահմանվել է 18 տոկոս ինչպես ազգային, այնպես էլ օտարերկրյա ընկերությունների համար, որն ամենացածր հարկում ունեցող երկրների վերին քառորդում է: *«Ազատ տնտեսական գոտիների մասին» օրենքով* (2011թ.)[16] ներդրվել են կարեւոր կարգավորումներ՝ ՕՈՒՆ-ն ազատ տնտեսական գոտիներ ներգրավելու նպատակով՝ առաջարկելով ազատումներ ԱԱՀ-ից, շահութահարկից, մաքսատուրքերից եւ գույքահարկից[17]:

---

[13] Մրցակցության պաշտպանության հանձնաժողով (2020). Հղում
[14] Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն (2022 թվական). Հղում
[15] Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգը (ARLIS) (2016). Հղում
[16] Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգը (ARLIS) (20I I). Հղում
[17] Հայաստանում օտարերկրյա ներդրողներին առաջարկվող հետագա շարժառիթները կարելի է տեսնել այստեղ:

7. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԸ

7.1. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի եւ Եվրոպական միության (ԵՄ) միջեւ տնտեսական կապերն ամրապնդվում են 2021 թվականին Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ) պաշտոնապես կնքվելուց հետո[18]: Այդ համաձայնագիրը նպատակ ունի բարելավելու Հայաստանի ներդրումային եւ գործարար միջավայրը՝ միաժամանակ վերացնելով ԵՄ-ի եւ Հայաստանի միջեւ առեւտրային ծառայությունների խոչընդոտները: ԵՄ-ն ներկայումս Հայաստանի երրորդ ամենամեծ արտահանման շուկան է՝ 2023 թվականին կազմելով Հայաստանի ընդհանուր առեւտրի 12.6 տոկոսը[19]: Հայաստանը ձգտում է ընդլայնել Հայաստանում գործող ընկերությունների մուտքն այս շուկա եւ մեծացնել ԵՄ-ում գործող ընկերությունների ներդրումը Հայաստանի ՕՈՒՆ զուտ ներհոսքերում:

7.2. ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԸ

Հայաստանն ամրապնդել է առեւտրային եւ ներդրումային համագործակցությունը տարածաշրջանային գործընկեր շուկաների հետ՝ 2014 թվականին դառնալով Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) ստորագրած կողմ [20], մաքսային միություն, որը Հայաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը եւ Ռուսաստանը միավորում է միասնական ինտեգրված շուկայում: ԵԱՏՄ անդամակցության միջոցով Հայաստանը նաեւ ստորագրել է ազատ առեւտրի համաձայնագրեր (ԱԱՀ) Սերբիայի, Վիետնամի եւ Իրանի հետ եւ ԵԱՏՄ

[18] Եվրոպական հանձնաժողով (2021). Հղում
[19] Եվրոպական հանձնաժողով (2024 թվական). Հղում
[20] Արտաքին գործերի նախարարություն (2023 թվական). Հղում

առաջին պետությունն է, որը կնքել է ծառայությունների առեւտրի եւ ներդրումների մասին համաձայնագիր Սինգապուրի հետ: Հայաստանը, 2011 թվականից սկսած, նաեւ Անկախ պետությունների համագործակցության ազատ առեւտրի գոտու ստորագրող կողմ է[21], որը ներառում է նաեւ Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Ռուսաստանը, Տաջիկստանը, Ուկրաինան եւ Հայաստան-Վրաստան ԱԱՀ-ն: «Ծառայությունների ազատ առեւտրի, հիմնադրման, գործունեության եւ ներդրումների իրականացման մասին» Անկախ Պետությունների Համագործակցության համաձայնագիրը[22] վավերացվել է Հայաստանի, Բելառուսի, Ղրղզստանի, Ռուսաստանի եւ Տաջիկստանի կառավարությունների կողմից:

7.3 ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԸ

Հայաստանը «Ներդրումային վեճերի կարգավորման մասին» միջազգային կոնվենցիան ստորագրած երկիր է եւ Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալության անդամ: Բացի այդ, Հայաստանի՝ այլ երկրների հետ կնքված երկկողմ ներդրումային պայմանագրերը (ԵՆՊ-ներ) պարունակում են համանման դրույթներ՝ միջազգային ներդրողների նկատմամբ վերաբերմունքի մասին, եւ միջազգային արբիտրաժի հնարավորություն՝ օտարերկրյա ներդրողներին տրամադրելով պաշտոնական երաշխիքներ օտարման, կատարողականին ներկայացվող պահանջների եւ օտարերկրյա եւ ազգային կապիտալի նկատմամբ անհավասար վերաբերմունքի մասով: Հայաստանն ունի ներկայումս գործող 41 ԵՆՊ-ներ[23] եւ 47 կրկնակի հարկման մասին համաձայնագրեր[24]: Հայաստանը նախորդ համաձայնագրի ժամկետը 2018 թվականին լրանալուց հետո ներկայումս բանակցում է Իտալիայի հետ նոր ԵՆՊ համաձայնագրի կնքման վերաբերյալ եւ

---

[21] Առեւտրի համաշխարհային կազմակերպություն (2013թ.). Հղում

[22] Անկախ Պետությունների Համագործակցություն (2024թ.). Հղում

[23] Երկկողմ ներդրումային պայմանագրեր՝ Արգենտինա, Ավստրիա, Բելգիա եւ Լյուքսեմբուրգ, Բելառուս, Կանադա, Չինաստան, Կիպրոս, Եգիպտոս, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Վրաստան, Գերմանիա, Հունաստան, Կորեա, Իրան, Իրաք, Իսրայել, Ճապոնիա, Հորդանան, Ղազախստան, Քուվեյթ, Ղրղզստան, Լատվիա, Լիբանան, Լիտվա, Նիդեռլանդներ, Քաթար, Ռումինիա, Ռուսաստան, Սինգապուր, Շվեդիա, Շվեյցարիա, Սիրիա, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուկրաինա, ԱՄԷ, ՄԹ, ԱՄՆ, Ուրուգվայ եւ Վիետնամ:

[24] Կրկնակի հարկման համաձայնագրեր՝ Դանիա, Լյուքսեմբուրգ, Ինդոնեզիա, Իրան, Ռումինիա, Հնդկաստան, Հունգարիա, Հունաստան, Իտալիա, Ղազախստան, Լիբանան, Լիտվա, Լատվիա, Իռլանդիա, Քաթար, Ֆրանսիա, Վրաստան, Ֆինլանդիա, Չեխիայի Հանրապետություն, Բուլղարիա, Էստոնիա, Ռուսաստան, Բելառուս, Խորվաթիա, Չինաստան, Արաբական Միացյալ Էմիրություններ, Ավստրիա, Բելգիա, Կանադա, Լեհաստան, Մոլդովա, Նիդեռլանդներ, Շվեյցարիա, Սիրիա, Թաիլանդ, Թուրքմենստան, Ուկրաինա, Քուվեյթ, Իսպանիա, Սլովենիա, Տաջիկստան, Սերբիա, Կիպրոս, Միացյալ Թագավորություն, Սլովակիա, Գերմանիա, Շվեդիա:

գտնվում է Բահրեյնի Թագավորության եւ Ուզբեկստանի հետ նոր ԵՆՊ համաձայնագրեր կնքելու գործընթացում:

8. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ՕՈՒՆ-ի համար Հայաստանի ռազմավարական ուղղվածությունը հիմնված է հետեւյալի վրա.

- Հայաստանում առկա ոլորտների ամրապնդում, ինչպես նաեւ նոր ոլորտների եւ գործունեության զարգացում,
- ՕՈՒՆ-ի սկզբնական շուկաների բազմազանեցում,
- ոլորտի առաջատար ԲԿ-ների ներգրավում՝ ապահովելով համաշխարհային ներկայություն, եւ
- ներդրումային նոր ձեւերի դյուրացում:

8.1. ՈԼՈՐՏՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանը բաց է բոլոր հիմնական ոլորտներում ներդրումների համար՝ ԲԿ-ների համար ստեղծելով հնարավորություններ իր բազմազան տնտեսության, այդ թվում՝ տեխնոլոգիաների եւ ծառայությունների, արտադրության, ագրոբիզնեսի եւ զբոսաշրջության ոլորտներում: *«Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի* միջոցով Հայաստանը նաեւ ընդլայնում է կոմունալ ծառայությունների, ենթակառուցվածքների, էներգետիկայի եւ կրթական նախագծերում ներդրումներ կատարելու ԲԿ-ների հնարավորությունները: Հիմնական ուշադրությունը նորարարական եւ արտահանման վրա կենտրոնացած ներդրումների ներգրավումն է, որոնք կաջակցեն արդյունաբերական վերափոխմանը, տնտեսության թվայնացմանը եւ կբարձրացնեն արտադրողականությունը: Թվայնացումը եւ «կանաչ» տնտեսությունը վճռորոշ դեր ունեն Հայաստանի երկարաժամկետ զարգացման գործում, իսկ ՕՈՒՆ-ի ներգրավումն այդ գործունեությանը կառավարության հիմնական ծրագրերի առանցքային կետն է[25]:

[25] Ծրագրերը ներառում են 2021-2025 թվականների թվայնացման ռազմավարությունը, «Ներուժ» սփյուռքի տեխնոլոգիական ստարտափների ծրագիրը, «Գաղափարից մինչեւ բիզնես» դրամաշնորհային ծրագիրը, SS ոլորտի հարկային արտոնությունների հավաստագրի տրամադրումը, Հայաստանի թվային փոխակերպման օրակարգը (2018-2030թթ.), 2020 թ. ազգային անվտանգության ռազմավարությունը, էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը (մինչեւ 2040 թ.) եւ Գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարությունը:

Հայաստանն ունի կարեւոր արդյունաբերական կլաստերներ եւ արժեքային շղթաներ առաջնային ոլորտներում՝ ներդրումների համար առանցքային հնարավորություններով հետեւյալ ոլորտներում.

- ՏՀՏ,
- կիսահաղորդիչներ՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով ԳՓ աշխատանքների, ինչպես նաեւ արտադրական հնարավորությունների վրա,
- ագրոբիզնես ՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով սննդի եւ խմիչքների արտադրության վրա,
- ճարտարագիտական եւ արդյունաբերական առաջատար ոլորտներ, այդ թվում՝ էլեկտրոնիկայի եւ դեղագործության ոլորտները,
- գործարար գործընթացների արտապատվիրակում, եւ
- կրթություն եւ վերապատրաստում,
- զբոսաշրջություն, ժամանց եւ զվարճանք,
- բարձր ավելացված արժեքով արտադրանք արհեստագործական, հատկապես՝ զարդերի, տեքստիլի եւ կաշվի արտադրության ոլորտներում:

Հայաստանին հաջողվել է ներգրավել ԲԿ-ներին՝ առաջնային ոլորտներում բարձրարժեք գործունեություն ծավալելու նպատակով: Աշխարհի առաջատար ԲԿ-ները, որոնք Հայաստանում ունեն ԳԱՓ կենտրոններ, ներառում են հետեւյալը.

- Սինոփսիս
- Էնվիդիա
- ԷՅ ԷՄ ԴԻ
- Բրոդքոմ
- Մայքրոչիպ թեքնոլոջի
- Սիմենս
- Ինսայթ
- Օրաքլ
- ԱՅ ԲԻ ԷՄ
- Մայքրոսոֆթ
- Էմերսոն
- Ֆիլիպ Մորիս

8.2. ՍԿԶԲՆԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ)

Մոտ գտնվելով Եվրոպային, Կենտրոնական Ասիային եւ Մերձավոր Արեւելքին, միաժամանակ ազատ առեւտրի համաձայնագրեր կնքած լինելով

Եվրոպայի եւ ամբողջ աշխարհի 40 երկրների հետ[26]՝ Հայաստանի ռազմավարական դիրքը եւ ոլորտային բազմազան հնարավորությունները մեծ հետաքրքրություն են առաջացնում ամբողջ աշխարհի ԲԿ-ների մոտ Հայաստանում ներդրումներ կատարելու առնչությամբ:

Ռազմավարական առումով կարեւոր շուկաները, որոնց վրա Հայաստանը կկենտրոնանա ԲԿ-ների կողմից ներդրումներ ներգրավելուն եւ երկրում ՕՈՒՆ-ի ներհոսքը բազմազանեցնելուն ուղղված խթանող գործունեության համար, ներառում են՝

- Ամերիկայի Միացյալ Նահանգները եւ Եվրոպան (հիմնականում կենտրոնանալով ամենախոշոր տնտեսությունների վրա),
- Պարսից ծոցի երկրների շուկաները (հատկապես՝ ագրոբիզնեսի ոլորտում եւ ՊՄԳ հնարավորությունների համար),
- Չինաստանը (աշխարհի ամենամեծ տնտեսությունը՝ հիմնական թիրախային ոլորտներում կատարվող ՕՈՒՆ-ով),
- Հնդկաստանը (ՏՏ եւ թվայնացում, դեղագործություն, ֆիլմերի արտադրություն):

Հայկական սփյուռքը կազմված է մոտավորապես 7.2 միլիոն հայերից, որոնք ապրում են 137 երկրներում: Այս եզակի միջազգային ցանցը Հայաստանի համար մրցակցային առավելություն է, որը Կառավարության կողմից ճանաչվել է Սփյուռքի գործերի գերագույն հանձնակատարի գրասենյակի ստեղծմամբ[27]: Հայաստան-Սփյուռք գործընկերությունը Հայաստանի կառավարության 2021-2026 թվականների ծրագրի առանցքային տարրն է: Այս նախաձեռնության նպատակն է բարենպաստ միջավայր ստեղծել սփյուռքահայերի համար՝ Հայաստան հայրենադարձության, Հայաստանում ապրելու, աշխատելու եւ արարելու համար, ինչպես նաեւ նպաստել ներդրումային գործընթացներին: ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ Բրազիլիայի նման խոշոր տնտեսություններում գործող ԲԿ-ներում աշխատող հայկական սփյուռքի հետ ակտիվ շփումը նույնպես շատ արդյունավետ կլինի ԲԿ-ների հետ կապեր հաստատելու եւ Հայաստանը որպես նրանց ՕՈՒՆ-ի նախագծերի համար կենսունակ տարբերակ դիրքավորելու համար:

---

[26] Առեւտրային համաձայնագրերում ընդգրկված երկրները՝ Ավստրիա, Բելառուս, Բելգիա, Բուլղարիա, Խորվաթիա, Կիպրոս, Չեխիայի Հանրապետություն, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Վրաստան, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իրան, Իռլանդիա, Իտալիա, Ղազախստան, Ղրղզստան, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ,
Մալթա, Մոլդովա, Նիդեռլանդներ, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Ռուսաստան, Սերբիա, Սինգապուր, Սլովակիա, Սլովենիա, Տաջիկստան, Թուրքմենստան, Իսպանիա, Շվեդիա, Ուկրաինա եւ Վիետնամ:

[27] Սփյուռքի գործերի գերագույն հանձնակատարի գրասենյակ (2024թ.). Հղում

8.3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՆՈՐ ՁԵՎԵՐԸ

Հայաստանի բաց դռների քաղաքականությունն ՕՈՒՆ-ի նկատմամբ ԲԿ-ներին խրախուսում է երկրում ներդրումներ կատարել ոչ միայն ՕՈՒՆ-ի հիման վրա զրոյից ստեղծվող նախագծերում, այլեւ ներդրումների այլընտրանքային ձեւերի, այդ թվում՝ բաժնետիրական կապիտալում կատարվող ներդրումների եւ միաձուլումների եւ ձեռքբերումների (ՄևՁ), միջազգային նախագծերի ֆինանսավորման եւ տեղական ձեռնարկությունների ու հաստատությունների հետ գործարար գործընկերության եւ համատեղ ձեռնարկությունների միջոցով: Հայաստանը ներդրումային բաց միջավայր է առաջարկում ներհոսքային ՕՈՒՆ-ի այս այլընտրանքային ձեւերի համար, որոնք նպաստում են տնտեսության արտադրական հնարավորությունների բարձրացմանը:

Աշխարհի առաջատար ԲԿ-ները, որոնցից է «Թելեփերֆորմանս» ընկերությունը, սկզբնական շրջանում Հայաստանում ներդրում են կատարել տեղական ընկերությունների ՄևՁ-ի միջոցով: Ազգային բարեկեցության հիմնադրամները (ԱԲՀ) եւ պետական կենսաթոշակային ֆոնդերը, մասնավորապես՝ Պարսից ծոցի երկրներից, մեծապես հետաքրքրված են Հայաստանում ներդրումային հնարավորություններով, եւ դրանք 2024 թվականի հունիսի դրությամբ միասին տնօրինում են ավելի քան 36 տրիլիոն ԱՄՆ դոլար ակտիվներ, որոնք, 2014 թվականից սկսած, աճել են 17,8 տրիլիոն ԱՄՆ դոլարով[28]: Այդ հիմնադրամները ավելի ու ավելի մեծ ներդրումներ են կատարում կապիտալատար ռազմավարական ենթակառուցվածքներում, վերականգնվող էներգիայի եւ անշարժ գույքի կառուցապատման նախագծերում ԱԵԿԱ տարածաշրջանում: ԱԲՀ-ները որպես ՕՈՒՆ-ի հիմնական աղբյուրներ են դարձել, ընդ որում, 2022 թվականին իրականացվող նախագծերում բաժնետիրական կապիտալում կատարված ուղղակի ներդրումները (օտարերկրյա եւ ազգային) գերազանցել են 71 միլիարդ ԱՄՆ դոլարը:

9. ՄԵՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԻՉ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Որպես մրցակցային ներդրումային նպատակակետ Հայաստանի ուժեղ կողմերի ընդգծումը եւ զարգացումը խիստ կարեւոր են որպես տարածաշրջանային ներդրումային հնարավորությունների ռազմավարական կենտրոն նրա ներուժը խթանելու համար: Հայաստանը պետք է ընդգծի առաջնահերթ ոլորտների եւ գործունեության հիմնական առավելությունները եւ զարգացնի դրանք՝ երկրի

[28] Համաշխարհային ԱԲՀ (2024թ.). Հղում

կողմից բազմազգ կորպորացիաներին (ԲԿ-ներ) կատարվող առաջարկները տարբերակելու նպատակով, ապահովելով կայուն եւ երկարաժամկետ բարձրորակ ներդրումների գրավումը եւ պահպանումը:

ԱԵԿԱ-ում ՕՈՒՆ-ի վայրի հիմնական որոշիչ գործոնները ներառում են հասանելիությունը հմուտ աշխատուժին (վկայակոչված ԲԿ-ների 52 տոկոսի կողմից), հասանելիությունը տարածաշրջանային շուկաներին (25 տոկոս), ներքին շուկայի աճը (28 տոկոս), կարգավորող միջավայրի որակը (26 տոկոս) եւ հասանելիությունը տեխնոլոգիաներին եւ նորարարությանը (15 տոկոս)[29]: Այս վայրերի որոշիչ գործոններում Հայաստանի մրցունակ դիրքը եւ հիմնական ուժեղ կողմերը հասկանալը կարեւոր նշանակություն ունի ՕՈՒՆ-ին խրախուսելու եւ դեպի Հայաստան գրավելու հարցում:

Ըստ Հայաստանի միջազգային վարկանիշների վերլուծության՝ Հայաստանն աչքի է ընկնում վայրի երեք հիմնական որոշիչ գործոններով.

1) **հմուտ եւ ծախսարդյունավետ աշխատուժ. Հայաստանը տարածաշրջանում մրցունակ վայր է հմուտ, տեխնիկական եւ ծախսարդյունավետ տաղանդների համար:**

Հայաստանի մարդկային կապիտալն ՕՈՒՆ-ը երկիր ներգրավելու համար դրա ամենամեծ ռեսուրսներից է եւ արտահանումների վրա կենտրոնացած, գիտելիքահեն եւ ներառական տնտեսություն կստեղծի՝ բարձրարժեք ոլորտներում եւ գործունեության մեջ աշխատուժի եւ շրջանավարտների հմտությունների խմբերի կայուն մատակարարմամբ:

[29] ՕՈՒՆ շուկաներ «Ֆայնենշլ Թայմզ Լիմիթիդ» ընկերությունից: Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում 2021-2023 թվականներին իրականացվող 351 նախագծերի մասին ԲԿ-ների հրապարակային մամլո հաղորդագրություններում մեջբերված՝ վայրի վերաբերյալ հիմնավորումների հիման վրա:

2) Քաղաքական միջավայր՝ մասնավոր հատվածի ներդրումային աջակցության համար. Հայաստանը տարածաշրջանում ներդրողների համար բարենպաստ առաջատար երկիր է օտարերկրյա ձեռնարկությունների համար:

Վերջին տարիներին Հայաստանը մեծ բարելավումներ է գրանցել կառավարման եւ մասնավոր հատվածում կատարվող ներդրումների աջակցման հարցում եւ շարունակելու է ամրապնդել իր ներդրումային միջավայրը եւ գործարար միջավայրի հիմնարար կառուցվածքները՝ ապահովելու համար, որ մասնավոր ձեռնարկությունները լինեն երկարաժամկետ, կայուն տնտեսական զարգացման շարժիչ ուժը:

3) Դեպի շուկա մուտքի եւ ռազմավարական դիրքի ընդլայնումը. Հայաստանը տարածաշրջանային առեւտրի եւ ներդրումային կենտրոն է իր կենտրոնական դիրքով:

Հայաստանը դիրքավորվում է որպես տարածաշրջանային կենտրոն օտարերկրյա ձեռնարկությունների համար՝ այստեղից դեպի եվրասիական եւ եվրոպական շուկաներ ընդլայնվելու նպատակով, ընդգծելով երկրի ռազմավարական դիրքը եւ գործընկերների հետ առեւտրի, ներդրումների եւ տնտեսական համագործակցության վերաբերյալ միջազգային համաձայնագրերը:

9.1. ՀՄՈՒՏ ԵՎ ԾԱԽՍԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՇԽԱՏՈՒԺ

ԱԵԿԱ տարածաշրջանում ՕՈՒՆ-ի համար ամենից հաճախ նշվող որոշիչ գործոնը հմուտ աշխատուժին հասանելիությունն է: Հայաստանն ունի հզոր մարդկային կապիտալ եւ կիրթ, բազմալեզու բնակչություն՝ մրցակցային առավելություններ ունենալով գիտության, տեխնոլոգիաների, ճարտարագիտության եւ մաթեմատիկայի (ԳՏՃՄ) ոլորտներում (2022 թվականին Հայաստանում ԳՏՃՄ առարկաների շրջանավարտների մասնաբաժինը կազմել է 20 տոկոս)[30], ինչը շարժիչ ուժ է եղել Հայաստանում բարձր տեխնոլոգիաների եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում զգալի ներդրումներ կատարելու համար՝ ներգրավելով համաշխարհային առաջատար ներդրողների, ինչպիսիք են «Էնվիդիա», «Էյ Էմ Դի» եւ «Սինոփսիս» ընկերությունները: Տեխնոլոգիաների ոլորտն այժմ ունի ավելի քան 30,000 աշխատող, իսկ 2022 թվականին Հայաստանի ՏՏ արտահանումը հասել է ավելի քան 1.926 միլիարդ ԱՄՆ դոլարի, ընդ որում, ԱԵԿԱ տարածաշրջանում Հայաստանն ուներ արտահանման ամենաբարձր կենտրոնացվածությունը համակարգչային ծառայությունների արտահանման ոլորտում եւ 6-րդն է աշխարհում[31]:

---

[30] Սոցիալ-տնտեսական հետազոտությունների հայկական կենտրոն (2024 թվական). Հղում

[31] Տվյալները դուրս են բերվել «ՕՈՒՆ ուղենիշ» գործիքից, «Ֆայնենշլ Թայմզ Լիմիթիդ»

Գիտելիքն ու նորարարությունը Հայաստանի կառավարության 2021-2026 թվականների ծրագրում տնտեսության զարգացման առանցքային առաջնահերթություններն են: Դա կհանգեցնի կառուցվածքային բարեփոխումների, որոնք ուղղված են կրթության եւ վերապատրաստման համակարգը երկրի առաջնահերթ ոլորտների կարիքներին համապատասխանեցնելուն՝ օգնելով պահպանել Հայաստանի մրցակցային առավելությունը հմուտ աշխատուժի առումով: «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը[32], «ԱՐՄԱԹ» լաբորատորիաները[33], «Ակադեմիական քաղաքը»[34], «Փլագ ընդ Փլեյ Ջըրմընի ՍՊԸ» աքսելերատորը[35] եւ «Ինժեներական քաղաք» նախագիծն[36] այդ ջանքերի օրինակներն են:

9.2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱԵԿԱ տարածաշրջանում ներդրումներ կատարող ԲԿ-ների մեկ քառորդից ավելին մեջբերում է կարգավորող միջավայրի որակը՝ որպես տվյալ վայրը բնորոշող առանցքային գործոն: Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել՝ ապահովելու, որ առեւտրային ձեռնարկությունների գրանցումը լինի պարզ, կարգավորող միջավայրը՝ արդյունավետ, իսկ ՕՈՒՆ-ի համար առկա լինի բաց դռների քաղաքականություն: 2019 թվականին գործարկվեց «e-regulations»

ընկերություն, եւ հիմնված են Առեւտրի համաշխարհային կազմակերպությունից ստացված տվյալների վրա:

[32] «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն. Հղում

[33] ԱՐՄԱԹ. Հղում

[34] Հայաստանի Հանրապետության վարչապետ (2024թ..). Հղում

[35] Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն (2024թ.). Հղում

[36] Ինժեներական քաղաք. Հղում

հարթակը, որը քայլ առ քայլ ուղեցույց է տրամադրում ձեռնարկատիրական եւ ներդրումային ընթացակարգերի համար: Հարթակն ընկերություններին եւ անհատ ձեռնարկատերերին հնարավորություն է տալիս գրանցել իրենց ձեռնարկությունները մեկ վայրում եւ նվազեցնել առեւտրային կազմակերպությունների առցանց գրանցման համար անհրաժեշտ ժամանակը[37]: *«Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքով* սահմանվել է ՊՄԳ նախագծերի օրենսդրական եւ ինստիտուցիոնալ շրջանակը, եւ մասնավոր հատվածի համար ներդրումային հնարավորություններ են ստեղծվել տնտեսության առողջապահական, ջրային եւ թափոնների կառավարման ոլորտներում, այդ թվում՝ օտարերկրյա ներդրողների համար:

Ցույց տալով Հայաստանի քաղաքական միջավայրի հզորությունը՝ 2018 թվականին Հայաստանը «Դի Իքոնոմիսթ» ամսագրի կողմից ճանաչվել է տարվա երկիր՝ ժողովրդավարության եւ կառավարման բարելավման համար[38]: Հայաստանը 2024 թվականին տնտեսական վերափոխումների առումով ամենաբարձր տեղն է զբաղեցրել Արեւելյան Եվրոպայում, Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում՝ բարելավումներ գրանցելով ժողովրդավարական փոխակերպման, տնտեսական փոխակերպման եւ կառավարման ոլորտում[39]: Փոխակերպման ցուցանիշի բարելավումներն արտացոլում են կարեւոր բարեփոխումները, այդ թվում՝ նոր ստեղծված Հակակոռուպցիոն դատարանը (որն իր աշխատանքն սկսել է 2022 թվականին), *«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին»* 2020 թվականի *օրենքի* կիրառումը եւ *«Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի* փոփոխությունները (2021 թվական), որոնք ի ցույց են դնում երկրի ներդրումային միջավայրի բարելավման դինամիկ քաղաքական միջավայրը:

9.3. ԴԵՊԻ ՇՈՒԿԱ ՄՈՒՏՔԻ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԻՐՔԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ

Մուտքը տարածաշրջանային շուկաներ ԱԵԿԱ տարածաշրջանում ներդրումներ կատարող ԲԿ-ների մեկ քառորդի կողմից մեջբերվում է որպես վայրի որոշիչ առանցքային գործոն: Առեւտրային համաձայնագրերի արագ ընդլայնման եւ իր ռազմավարական դիրքի շնորհիվ Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցում որպես տարածաշրջանային կենտրոն դիրքավորվելու հարցում:

[37] «eRegulations Armenia» պորտալ (2019թ.). Հղում
[38] «Դի Իքոնոմիսթ» ամսագիր (2018թ.). Հղում
[39] «Բերթելսման» փոխակերպման ինդեքս (2024թ.). Հղում

Հայաստանը ԵՄ-ի հետ ստորագրել է ՀԸԳՀ-ն, ինչպես նաեւ ԵԱՏՄ անդամ է: Այդ համաձայնագրերն արտահանող ընկերություններին հնարավորություն են տալիս կապիտալացնել Հայաստանի ռազմավարական դիրքը եւ երկիրը դիրքավորել որպես ԲԿ-ների համար արեւելքն ու արեւմուտքը կամրջող առանցքային տարբերակիչ:

Հայաստանը ձգտում է ընդլայնել ենթակառուցվածքները եւ տարածաշրջանային համագործակցությունը՝ տրանսպորտային հնարավորությունները բարելավելու նպատակով, որին աջակցում է *«Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքը*: Հայաստանի կառավարությունն առաջարկել է «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությունը՝ տարածաշրջանային համագործակցությունը բարելավելու[40], արեւելք-արեւմուտք եւ հյուսիս-հարավ ուղղություններով առեւտուրն ընդլայնելու, ինչպես նաեւ Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ Հայաստանի ճանապարհային եւ երկաթուղային կապերն ապաշրջափակելու նպատակով՝ սահմանելով սահմանային եւ մաքսային հսկողություն եւ ենթակառուցվածքների զարգացում՝ ինքնիշխանության, հավասարության եւ փոխադարձության սկզբունքների հիման վրա: Ավարտվել է Շիրակի մարզում «Չոր նավահանգիստ» եւ հատուկ տնտեսական գոտի մշակելու իրագործելիության ուսումնասիրությունը, որը ռազմավարական նախագիծ է «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնության ներքո[41]: Այս նախաձեռնությունը կստեղծի բազմամոդել չոր նավահանգիստ եւ արդյունաբերական պարկ՝ աջակցելու Հայաստանին որպես տարանցիկ տրանսպորտային եւ արտահանման ուղղվածությամբ կենտրոն:

Հայաստանի ապրանքների եւ ծառայությունների արտահանումը 2023 թվականին աճել է մոտ 41.6 տոկոսով, եւ Հայաստանը հասել է աշխարհում չորրորդ ամենաարագ ՀՆԱ-ի եւ արտահանման աճին՝ ՕՈՒՆ-ի գծով, 100 առաջատար երկրների շարքում: Թեեւ հարեւան երկրները եւ ԵԱՏՄ անդամները Հայաստանի արտահանումների գրեթե կեսի նպատակակետերն են, ԵՄ երկրները դարձել են երկրորդ խոշորագույն շուկան, իսկ ԱՄԷ-ն եւ Չինաստանը զգալիորեն մեծացրել են որպես առեւտրային գործընկերներ իրենց դերը: Ընդլայնվող դեպի շուկա մուտք, ռազմավարական դիրք, աջակցող քաղաքական միջավայր եւ բարելավված ենթակառուցվածքներ ունենալով՝ Հայաստանն ամուր դիրք է առաջարկում մի քանի տարածաշրջանում իրականացվող արտահանումների համար:

[40] Հայաստանի Հանրապետության վարչապետ (2024թ.). Հղում
[41] Հայաստանի Հանրապետության վարչապետ (2024թ.). Հղում

10. ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

10.1. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

Արդյունավետության բարձրացմանն ուղղված ՕՈՒՆ-ն այն առանցքային պատճառն է, թե ինչու են ԲԿ-ները ներդրումներ կատարում ԱԵԿԱ տարածաշրջանում: ԲԿ-ներին գրավում են ամենածախսարդյունավետ վայրերը, որոնք առաջարկում են հասանելիություն հմուտ աշխատուժի, շուկաների եւ բարձրորակ կարգավորող եւ քաղաքական միջավայր: Աշխատանքի, տեղանքի եւ գույքի հետ կապված, ինչպես նաեւ կոմունալ ծախսերը զգալիորեն ազդում են կորպորատիվ վայրի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացի վրա՝ կախված ոլորտից եւ նախագծի տեսակից: Հայաստանն առաջարկում է տարածաշրջանում բարձր որակավորում պահանջող պաշտոնների համար ամենացածր աշխատուժի ծախսերը, ինչպես նաեւ մրցունակ գներ՝ կոմունալ եւ գույքային ծախսերի համար:

10.2. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Երկրի ռազմավարական ենթակառուցվածքների ցանցի արդիականացումը եղել է կառավարության առաջնահերթությունը՝ Հայաստանի մրցունակությունը բարձրացնելու համար: Բազմակողմ խմբերից ստացված աջակցությունը, ինչպիսիք են Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը, Ասիական զարգացման բանկը եւ ԵՄ-ն, զգալիորեն խթանել են Հայաստանի ճանապարհային եւ էներգետիկ ենթակառուցվածքների ցանցը, իսկ մասնավոր հատվածի գործընկերների հետ գործընկերությունների արդյունքում զգալի ներդրումներ են ներգրավել վերականգնվող էներգիայի նախագծերում եւ արդյունաբերական ենթակառուցվածքների արտադրության եւ արտահանման գործում:

Կառավարության «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությամբ[42] նաեւ ընդգծվել են երկրի երկաթուղիները, որոնք կարող են վերականգնվել առեւտրային նպատակով օգտագործման համար՝ ապահովելու երկաթուղային կապ Հարավային Կովկասի տարածաշրջանի եւ հարեւան երկրների միջեւ, եւ առաջարկվել է բացել Հայաստանի Արեւելք-արեւմուտք ճանապարհի ենթակառուցվածքային ցանցերը հարեւան Ադրբեջանի եւ Թուրքիայի համար եւ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքը, որը 556 կմ ձգվելու է Վրաստանից մինչեւ Իրան:

[42] Հայաստանի Հանրապետության վարչապետ (2024թ.). Հղում

Հայաստանն էական հաջողությունների է հասել Հայաստանում ՏՏ եւ ԳևՓ գործողություններ հաստատելու նպատակով ԲԿ-ներին ներգրավելու հարցում, եւ թվային ենթակառուցվածքի որակը շատ կարեւոր է դարձել տեխնոլոգիաների ոլորտի շարունակական աճի եւ մրցունակության համար: Հայաստանն էական առաջընթաց է գրանցել իր թվային ենթակառուցվածքի ամրապնդման գործում. 2023 թվականին այն գրանցել է աշխարհում համացանցային վերբեռնման երրորդ ամենամեծ արագությունը՝ զիջելով միայն Ճապոնիային եւ Հարավային Կորեային, եւ իններորդը՝ ներբեռնման ամենամեծ արագությամբ[43]: Հայաստանը նաեւ ԱԵԿԱ տարածաշրջանում ամենաբարձր տեղն է զբաղեցրել միջազգային համացանցի թողունակության տեսանկյունից (բիթ յուրաքանչյուր օգտագործողի համար), եւ համաձայն 2024 թվականի ցանցային պատրաստվածության ցուցիչի[44]՝ Հայաստանն ԱՊՀ տարածաշրջանում զբաղեցնում է 3-րդ տեղը՝ տարածաշրջանում միջինից բարձր դիրք գրանցելով տեխնոլոգիաների, մարդկանց եւ կառավարման հարցում:

Կառավարությունը, Հայաստանը որպես տեխնոլոգիական կենտրոն դիրքավորելու իր առաքելությանը համապատասխան, ակտիվորեն աշխատում է երկրում 5G լայնաշերտ ցանցի ներդրման ուղղությամբ: 3600-3800 ՄՀց ռադիոհաճախականության տիրույթն արդեն ազատականացվել է, եւ նախաձեռնվել են համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

[43] Տվյալները դուրս են բերվել «ՕՆՈՒ ուղենիշ» գործիքից, «Ֆայնենշլ Թայմզ Լիմիթիդ» ընկերություն:
[44] «Պորտուլանս» ինստիտուտ (2024թ.). Հղում

ԳԾԱՊԱՏԿԵՐ 7. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԸՆՏՐՎԱԾ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՎԵՐԲԵՌՆՄԱՆ ԵՎ ՆԵՐԲԵՌՆՄԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ՄԵԳԱԲԻԹ ՎԱՅՐԿՅԱՆՈՎ (ՄԲ/Վ), 2023 Թ.



Աղբյուրը՝ Լայնաշերտ հասանելիության արագության ստուգիչ:

10.3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ընդհանուր գործարար միջավայրը ներառում է ձեռնարկություն հիմնելու դյուրինությունը եւ ծախսերը, կարգավորող միջավայրի որակը եւ գործառնական ռիսկերի մակարդակը: Իրավական եւ կարգավորող գործընթացների արդյունավետությունը, կապիտալի մուտքը եւ երկրից դուրսբերման դյուրին լինելը, պետական կարգավորումների թափանցիկությունը, կոռուպցիայի բացակայությունը, ներդրողների հուսալիությունը եւ սեփականության իրավունքները բոլորը մեջբերված են 2024 թվականի «Քիրնիի» ՕՈՒՆ-ի հուսալիության ցուցիչում ներդրողների կողմից ներդրումային մտադրությունները սահմանելուն ուղղված կարեւորագույն ընդհանուր գործոնների լավագույն հնգյակում[45]:

Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) ՕՈՒՆ կարգավորող սահմանափակման ցուցիչը ցույց է տալիս, որ Հայաստանն ունի ՕՈՒՆ ամենաբաց ռեժիմներից մեկը[46]՝ զբաղեցնելով 9-րդ հորիզոնականը եւ մեծ աջակցություն ցուցաբերելով մասնավոր հատվածի՝ արտերկրից ստացվող ներդրումներին:

Համաձայն «Լեգատում» ինստիտուտի «Բարեկեցության ցուցիչ 2024»-ի, որով դասակարգվում է երկրի հարստությունը եւ բարեկեցությունը, Հայաստանը զբաղեցրել է 61-րդ հորիզոնականը եւ սկսած 2017 թվականից՝ դասակարգման սանդղակում բարձրացել է 18 հորիզոնականով՝ ամենից լավ արդյունքներ

[45] Քիրնի (2024թ.). Հղում
[46] ՏՀԶԿ (2020թ.). Հղում

գրանցելով ձեռնարկատիրության պայմանների եւ կրթության ոլորտներում, մինչդեռ նախորդ տասնամյակի հետ համեմատությամբ ամենամեծ բարելավումը տեղի է ունեցել կառավարման ոլորտում[47]: Այս առավելություններն ու բարելավումները նպաստում են Հայաստանի աճող մրցակցային առավելությանը մասնավոր հատվածում ներդրումային աջակցության հարցում, եւ Հայաստանը զբաղեցնում է 1-ին հորիզոնականը գործընկեր երկրների շարքում՝ տնտեսության մեջ պետական սեփականության ամենացածր աստիճանով, եւ 3-րդ տեղն այն մասնավոր ընկերությունների դեպքում, որոնք ունեն թույլտվություն եւ պաշտպանություն: Նույն կերպ, ինչպես ներկայացված է 8-րդ գծապատկերում, Հայաստանը երկրում գործող ձեռնարկությունների նկատմամբ կիրառում է ցածր կարգավորող բեռ: Հայաստանի ամուր օրենսդրական եւ կարգավորող դաշտը շարունակում է կատարելագործվել՝ խթանելու եւ պաշտպանելու մասնավոր հատվածի ներդրումները, որոնք տնտեսական զարգացման հիմնական շարժիչ ուժն են:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԸՆՏՐՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ, 2022 Թ.[48]



Աղբյուրը՝ «Ֆրեյզեր» ինստիտուտ:

10.4. ԱՇԽԱՏՈՒԺԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԻՎԸ

Մարդկային ռեսուրսների առկայությունն ու արժեքն աշխատանքի արտադրողականության եւ հմտությունների հետ մեկտեղ ՕՈՒՆ-ի հիմնական շարժիչ ուժերն են, հատկապես՝ տեխնոլոգիական եւ գիտելիքահեն ծառայությունների՝ ըստ ծավալի ՕՈՒՆ-ի նախագծերի առաջատար ոլորտները դառնալուն զուգընթաց: «Նորարարությունների համաշխարհային ցուցիչ 2023»-ում[49] Հայաստանը զբաղեցրել է աշխարհում 72-րդ հորիզոնականը, որը

[47] «Լեգատում» ինստիտուտ (2024թ.). Հղում

[48] 0-10 միավոր, որտեղ 10-ն ամենաբարձրն է՝ հիմնված բիզնես կարգավորումների, աշխատանքային կարգավորումների եւ վարկային շուկայի կարգավորումների գնահատման վրա. Հղում

[49] ՄՍՀԿ (2024թ.). Հղում

բարելավում է 2022 թվականի 80-րդ հորիզոնականից եւ աշխարհում ամենամեծ առաջխաղացումներից մեկն է: Այս բարելավումը հատկապես ուշագրավ էր նորարարության արդյունքներում, որտեղ 2023 թվականին Հայաստանն աշխարհում զբաղեցրել է 62-րդ հորիզոնականը: Հայաստանի համաշխարհային վարկանիշն ամենից բարձրն էր ստեղծագործական արդյունքների (61-րդը), գիտելիքների եւ տեխնոլոգիական արդյունքների (67-րդը) եւ ինստիտուտների (69-րդը) տեսանկյունից եւ համաշխարհային մակարդակով մրցունակ է ըստ այնպիսի ցուցանիշների, ինչպիսիք են ՏՀՏ ծառայությունների արտահանումները՝ որպես ընդհանուր առեւտրի տոկոս (աշխարհում 9-րդը), աշխատանքի արտադրողականության աճը (աշխարհում 13-րդը) եւ ՏՀՏ հասանելիությունը (աշխարհում 18-րդը)՝ ի ցույց դնելով ուժեղ մրցունակ արժեքներ տաղանդների եւ բարձր տեխնոլոգիական ծառայությունների արտահանումների ոլորտում:

Ինչպես ներկայացված է 9-րդ գծապատկերում, 2018-2023 թվականների ընթացքում Հայաստանն էականորեն 11 հորիզոնականով բարելավել է իր վարկանիշը Տաղանդների մրցունակության համաշխարհային ցուցիչում[50]՝ 66-րդ հորիզոնականից հասնելով 55-րդ հորիզոնականի: Հայաստանը հատկապես լավ արդյունքներ է գրանցել հմտությունների համապատասխանությամբ (աշխարհում 2-րդը), միջնակարգ կրթություն ստացած աշխատուժով (աշխարհում 5-րդը), եռաստիճան կրթություն ստացած բնակչությամբ (11-րդը) եւ միջնակարգ կրթություն ստացած բնակչությամբ (19-րդը):

[50] INSEAD (2023թ.). Հղում

ԳԾԱՊԱՏԿԵՐ 9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՂԱՆԴՆԵՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԸ, 2018-2023 ԹԹ.



Աղբյուրը՝ Տաղանդների մրցունակության համաշխարհային ցուցիչ:

2023 թվականին երկրում ունենալով 59 համալսարան եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող 80,095 ուսանող[51]՝ Հայաստանն ունի տեխնոլոգիաների եւ նորարարության ոլորտում համաշխարհային առաջատար դառնալու ներուժ՝ խթանելով համագործակցությունը գիտական համայնքի եւ մասնավոր հատվածի միջեւ՝ ապահովելու, որ կրթական ծրագրերը համապատասխանեն շուկայի կարիքներին եւ պատրաստեն շրջանավարտների, որոնք լավ պատրաստված են ժամանակակից աշխատուժի եւ կարեւոր ոլորտների համար:

Հայաստանը նաեւ գիտակցում է, որ սփյուռքի համայնքը հմտությունների արժեքավոր աղբյուր է, եւ այդ հմտությունները ներգրավելուն ուղղված նախաձեռնությունները պետք է ուսումնասիրվեն եւ ամրապնդվեն: Այդ մոտեցումն արտացոլում է ինչպես համայնքի մշակութային կապերը Հայաստանի հետ, այնպես էլ 7.2-միլիոնանոց սփյուռքի հարաբերական չափը, որը կազմում է աշխարհում երկրի՝ արտերկրում ապրող բնակչության ամենաբարձր տոկոսներից մեկը: Հայկական սփյուռքի ոլորտային ցանցերի միջեւ կապերի վերհանումը եւ կապակցումը բարձր պահանջարկ ունեցող այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տեխնոլոգիաները եւ ԳևՓ-ն, ինչպես նաեւ օտարերկրյա ԳՏՃՄ մասնագետների հետ կապերի հաստատումը Հայաստանի կողմից իրականացվող գործողությունների այն հիմնական կետերն են, որոնք լրացնում են երկրում հմտությունների բացերը:

[51] «Էնթերփրայզ Արմենիա» հիմնադրամ (2023թ.). Հղում

11. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄԸ

Էկոնոմիկայի նախարարությունը Հայաստանում ներդրումային քաղաքականության մշակման համար պատասխանատու հիմնական պետական մարմինն է, որը ներառում է օտարերկրյա ներդրումներ գրավելու համար բարենպաստ իրավական եւ կարգավորող միջավայրի ստեղծումը: Նախարարությանը հանձնարարված է մշակել ռազմավարություններ եւ ծրագրեր, որոնք համապատասխանում են Հայաստանի ավելի լայն տնտեսական նպատակներին՝ ապահովելով, որ ներդրումային քաղաքականությունը լինի ճկուն, թափանցիկ եւ ուղղված դեպի կայուն աճը[52]:

«Էնթերփրայզ Արմենիա» հիմնադրամը հանդես է գալիս որպես երկրի «մեկ պատուհանը» եւ գլխավոր գործընկերը ներդրողների համար, որը պատասխանատու է ՕՈՒՆ-ի ներհոսքերի ներգրավման եւ դյուրացման, օտարերկրյա եւ տեղական ներդրողներին ներդրումների կենսափուլի ընթացքում աջակցության, ներդրողներին եւ հանրային հատվածին կամրջելու եւ հետագա խնամքի ծառայություններ տրամադրելու համար:

Հետեւելով միջազգային լավագույն գործելակերպերին՝ 2019 թվականին ստեղծվել է «Էնթերփրայզ Արմենիա» հիմնադրամը, որը հաշվետու է Հայաստանի վարչապետի նախագահությամբ գործող հոգաբարձուների խորհրդին՝ ՕՈՒՆ ներգրավելու եւ դյուրացնելու եւ որպես գործարար նպատակակետ Հայաստանի հեղինակությունը բարձրացնելու համար: «Էնթերփրայզ Արմենիա» հիմնադրամը գործում է որպես ավելի լայն ներդրումային քաղաքականության շրջանակի մի մաս եւ սերտորեն աշխատում է Հայաստանի կառավարության, քաղաքապետարանների, ազատ տնտեսական գոտիների եւ գործարար համայնքի, այդ թվում՝ գործարար անդամակցությամբ կազմակերպությունների եւ մասնավոր

[52] Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված ներդրումային ծրագրերը կարելի է տեսնել այստեղ:

ընկերությունների հետ:

Կազմակերպության լիազորությունները ներառում են հետեւյալը.

- խրախուսել աջակցող միջավայր ինչպես օտարերկրյա, այնպես էլ ազգային ներդրողների համար՝ Հայաստանը դիրքավորելով որպես խիստ ցանկալի ներդրումային նպատակակետ համաշխարհային մակարդակով,
- ներգրավել նոր ՕՈՒՆ եւ խրախուսել վերաներդրումը՝ նպաստելով կայուն տնտեսական աճին,
- հասնել Հայաստանի ճանաչմանը որպես առաջատար գործարար ուղղություն, որը հայտնի է իր դինամիկ եւ բազմազան տնտեսությամբ, որը հարստացնում է ինչպես տեղական ձեռնարկատերերին, այնպես էլ համաշխարհային գործարար առաջատարներին:

«Էնթերփրայզ Արմենիա» հիմնադրամը վարում է արտերկրում գտնվող ներկայացուցիչների ցանց, որը տրամադրում է աջակցության ծառայություններ այն ընկերություններին, որոնք ցանկանում են ներդրումներ կատարել եւ Հայաստանում զբաղվել գործարար գործունեությամբ: Ցանցը ներառում է 15 ներկայացուցիչ Կանադայում, ԱՄՆ-ում, Բրազիլիայում, Իռլանդիայում, Նիդեռլանդներում, Իսպանիայում, Իտալիայում, Բուլղարիայում, Ռուսաստանում, ԱՄԷ-ում եւ Եթովպիայում[53]: «Էնթերփրայզ Արմենիա» հիմնադրամը հանձնառու է ընդլայնել եւ ամրապնդել արտերկրում գտնվող այդ ցանցերը՝ օտարերկրյա ներդրողներին գործարար հնարավորությունների, շուկա մուտք գործելու եւ ներդրումների կազմակերպման, ինչպես նաեւ գովազդային միջոցառումների մասին խորհրդատվություն եւ տեղեկություններ տրամադրելու նպատակով:

Այսօր ՕՈՒՆ-ի համար մրցակցությունը եւ հաջողությամբ այն ներգրավելը պահանջում է կառավարությունների կողմից արդյունավետ հորիզոնական քաղաքականություն եւ գործելակերպեր, որի համար անհրաժեշտ է ամբողջ կառավարության մակարդակով մոտեցումը: Թեեւ «Էնթերփրայզ Արմենիա» հիմնադրամն առաջատար դեր ունի ազգային, տարածաշրջանային եւ ոլորտային առաջարկները հավաքագրելու եւ դրանք ներդրողներին ներկայացնելու գործում, այն ապավինում է պետական գերատեսչություններին, ինչպես նաեւ պետական եւ մասնավոր հատվածներին՝ ապահովելու համար, որ Հայաստանի առաջարկները մրցունակ եւ աջակցող լինեն առաջատար ԲԿ-ների համար՝ Հայաստանում ներդրումներ կատարելու նպատակով: Աջակցության այս ավելի լայն ցանցի ներգրավումը եւ զարգացումն «Էնթերփրայզ Արմենիա» հիմնադրամի համար

[53] «Էնթերփրայզ Արմենիա» հիմնադրամ (2024թ.). Հղում

կարեւոր խնդիր է լավագույն գործելակերպին համապատասխան խթանում իրականացնելու համար:

12. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Գիտելիքահեն ծառայությունների աճը եւ կլիմայի փոփոխության եւ առաջադեմ տեխնոլոգիաների շուրջ ձեւավորվող նոր ոլորտները նոր հնարավորություններ են ստեղծում բարձրորակ, արտահանմանը միտված ՕՈՒՆ ներգրավելու համար: Մատակարարման շղթաների տարածաշրջայնացումը նույնպես կարեւոր միտում է, որն ազդում է ՕՈՒՆ-ի վայրի վրա:

Քաղաքականության արդյունավետ իրականացումը խիստ կարեւոր է մի շարք ոլորտներում, այդ թվում՝ հմուտ աշխատուժի ֆոնդ ստեղծելու, ներդրումային քաղաքականության ռեժիմի բարելավման եւ շուկային հասանելիությունը եւ կապն ընդլայնելու ոլորտներում՝ ապահովելու համար, որ Հայաստանը կարողանա օգտվել համաշխարհային միտումներից եւ ներգրավել առաջատար ԲԿ-ներ եւ որակյալ ներդրումներ:

Հայաստանը զգալի բարելավումներ է կատարել որպես ՕՈՒՆ-ի վայր իր գրավչությունը բարձրացնելու նպատակով, եւ Հայաստանի կառավարությունը հանձնառու է բարձրացնել երկրի համբավն արտերկրում՝ որպես ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վայր: Աշխատատեղերի ստեղծումը եւ բարձրարժեք ոլորտների եւ գործունեության զարգացումը Հայաստանի զարգացման օրակարգի առանցքային առաջնահերթություններ են, որոնց հնարավոր չէ հասնել առանց ՕՈՒՆ-ի:

«Էնթերփրայզ Արմենիա» հիմնադրամը կշարունակի համագործակցությունն իր գործընկեր կազմակերպությունների հետ՝ խթանելու Հայաստանը որպես ներդրումային նպատակակետ ԲԿ-ների համար Էկոնոմիկայի նախարարության հովանու ներքո եւ կիրականացնի կառուցողական քաղաքականության քարոզը՝ արտացոլելու Հայաստանի համար առաջնահերթ ոլորտների եւ գործունեության կարիքները, ավելացնելու աշխարհում ներդրումների առանցքային տարածաշրջանների թիվը եւ իրականացնելու արտերկրից ներդրումների կարգավորման նոր եղանակներ: